ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԹՂԹԱՊԱՆԱԿ

**ՖԱԿՈՒԼՏԵՏ- ԿՀՍ**
**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ- ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՒՐՍ- 3-ՐԴ**
**ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ- ԵՐևԱՆ ՔԱՂԱՔԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 5 ՀԻՄՆ. ԴՊՐՈՑ**
**ՈՒՍԱՆՈՂԻ ԱԱՀ- ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
**ՄԵԹՈԴԻՍՏ –ՔԵԼՈՅԱՆ ՄԱՐԻ**

## 09.02.2020-ԻՑ ՄԻՆՉև 05.03.2020

# ԻՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեբանի ակտիվ ու ճիշտ աշխատանքը կարևոր դեր ունի երեխա-

ների դաստիարակության գործում: Ես ինձ որպես հոգեբան տեսնում եմ բարիացակամ և կարեկցող: Կլինեմ գիտելիքներով հարուստ և հասանելի;

Սպասելիքներս բավականին մեծ են, բայց առաջնայինը ուզում եմ հասկանալ հոգեբանի դերը դպրոցում՝ հասկանալ երեխաների հոգեբանությունը:

Սովորելու կոնցեպցիան կայանում է նրանում, որ ցանկանում եմ բացահայտելու Ու հասկանալու առաջին հերթին ինքս ինձ, հետո օգնել ու հասկանալ ուրիշներին:

# Տեղեկություններ պրակտիկայի հիմնարկի մասին

**Պրակտիկան անց է կացվել Երևանի , Ավան վարչական շրջանի  համար 104 իմնական դպրոցում.**





# Անհատական աշխատանք 7 ամյա Միլենայի հետ





## ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄ՝

- ✔ **<Ես և իմ ընտանիքը> մեթոդիկա**
- ✔ **Զրույց**
- ✔ **Դիտում**
- ✔ **<8 գույն ունեցող ծաղիկ> պրոյեկտիվ մեթոդիկա**
- ✔ **<Կակտուս> մեթոդիկա**
- ✔ **<Ուշադրության զարգացման >մեթոդներզարգացման>մեթոդներ**



# Մ.Ա. Պանֆիլովայի «Կակտուս » մեթոդիկա



Միլենան կակտուսը նկարել էր միայնակ,դա `
ինտրովերսիա է: Նա նկարելիս այդքան էլ վառ
գույներ չի օգտագործել, որը խոսում  է  տագնապի
առկայության մասին:  Նրա կակտուսը ևս
ունի փշեր, բայց  ի  տարբերություն  Արինայի , Արթուրի
կակտուսի  փշերը  բավականին  մոտ
են, և  դա խոսում  է ագրեսիվության մասին:

# Հոգեբանական թեստ՝ Ինքնանկար

Սյս նկարի օգնությամբ երեխան ցանկանում է ցույց տալ, որ ինքը ուժեղ է իր ընկերներից: Ընկերներին իրենից ներքև է նկարել և սանդուխք է նկարել փորը նշանակում է որ ընկերները կարող են բարձրանալ սակայն ինքը միևնույն է ուժեղ է: Իրեն պրոյեկտում է նկարել ինչը նշանակում է, որ ուրիշների ուժն է իրեն վերագրում: Ծանրաձողը երեխայի պաշտպանական մեխանիզմն է: Նկարում գլուխը մեծ է նկարել ինչը սովորաբար ենթադրում է մեծ ինտելեկտուալ հավակնություններ կամ դժգոհություն իր ինտելեկտից: Ձեռքերը խորհրդանշում են անձի շփումը շրջապատող աշխարհի հետ, քանի որ այստեղ ձեռքերը բարակ է նկարված այսինքն շրջապատի հետ կապը այդքան էլ ուժեղ չէ: նկարում ձեռքի թաթը նման է ձեռնամարտիկի ձեռնոցը ինչը նշանակում է որ նկարողի մոտ կա ագրեսիայի արտամղում:



# Ես և  իմ ընտանիքը >> մեթոդիկա



Միլենան, իր ընտանքիը նկարելիս վերևում նկարել է ժպտացող արևներ մարդկանց տեսքով:Հետո  նկարել է հայիկին ում ձեռքը բռնել էր քույրը, քրոջ ձեռքը բռնած իրեն`որ  չափսերով  ավելի փոքր էր և վերջում մայրիկին:Նա իրեն նկարել էր փոքր, ինչ նշանակում էր որ նա ունի ցածր    ինքնագնահատական: Իսկ այն, որ բոլորը իրար ձեռք էին բռնել, դա նշանակում է, որ նրանք բավականին մտերիմ են միմյանց հետ , և առնաց  մեկը մյուսի չեն կարող ապրել:

# Ուշադրության զարգացման մեթոդներ

Այս մեթոդիկայի միջոցով որոշվում է երեխայի ուշադրության ծավալը:Դրա համար օգտագործվում է ստորև ներկայացված նկարը:
Հետազոտությունը սկսելուց առաջ  երեխան ստանում է հետևյալ հրահարգը. «Հիմա մենք կխաղանք քեզ հետ խաղ ուշադրությանդ հիման վրա:Ես քեզ մեկը մյուսի ետևից ցույց կտամ քարտեր,որոնց վրա նկարված են կետեր,իսկ հետո դու ինքդ կնկարես այդ կետերը դատարկ վանդակներում, որտեղ դու տեսել ես»: Այնուհետև երեխային 1-2 վայրկյան ցույց են տալիս յուրաքանչյուր 8 քարտերը,այնուհետև երեխան տեսած կետերը տեղադրում է վանդակներում 15-վայրկյանի ընթացքում:Այդ ժամանակը տրվում է երեխային ,որպիսի նա կարաղանա հիշել,որտեղ էր գտնվում նեսած կետերը և նշել դրանք դատարկ վանդակներում:




7
5
3
1
8
6
4
2

# ՈՒԹ գույն ունեցող ծաղիկը>> պրոյեկտիվ մեթոդիկա





Արինան սև գույնի թերթիկը նմանացրել է իր հայրիկին,Շականակագույնը՝ քույրիկին, կարմիրը՝մայրիկին, Մոխրագույնը՝ տատիկին, կապույտը՝ եղբորը, իսկ Կանաչը՝ պապիկին:Իրեն դուր էր գալիս մանուշակագույնը, իսկ ինքն իրեն պատկերացնում էր կարմիր գույնի մեջ:Սև գույնը որ, ընտրել է իր հայրիկի համար նշանակում է որ հայրն իր վրա շատ է բարկանում և թողնում է ագրեսիվ վերաբերմունք:Շականակագույնը որ ընտրել է քույրիկի համար, նշանակում է որ նա իր հանդեպ շատ պահանջկոտ է:Կարմիրը, որը ընտրել է մայրիկի համար՝ ուրախ մարդ է սակայն կա որոշ անկայունություն երեխայի հետ հարաբերություններում; Մոխրագույնը որ ընտրել է տատիկի համար նշանակում է Որ նա ոչ հուզական է, ճնշում է երեխայի ակտիվությունը, ինքնահավան է, քննադատող:Երկնագույնով ընտրել ՝ եղբորը, ինչը նշանակում է որ նրանք մոտիկ են բաց միասին չեն միշտ, տվյալ մարդու հետ հետաքրքիր խազեր կան:Կանաչ գույնով ընտրել՝ պապիկին,որը նշանակում է հույս, հենարան, հանգստության և պաշտպանվածության զգացում;

# Լ.Դյուսի պրոյեկտիվ մեթոդիկան




Միլենայի կարծիքով հայրիկի դեմքի արտահայտությունը փոխվել էր, որովհետև նա ավելի

շատ ժամանակ էր անցկացնում մայրիկի ոչ թե իր հետ: Արթուրը մտածում էր որ հայրիկի մեջ

խանդն էր խոսում:Որովհետև նա տղա էր, և պետքա ավելի շատ ժամանակ անցկանցեր

հայրիկի ոչ թե մայրիկի հետ:

# Swot վերլուծություն

Որպես ապագա  հոգեբան  և մասնագետ իմ  ուժեղ  կողմերից  են.՝

Գաղտնապահությունը

Մարդկանց  հասկանալու   ցանկություն

Ինքնաճանաչման   զարգացման  ցանկությունը

Իմ  թույլ  կողմերն  են .՝

Համբերատարությունը

Զգացմունքայնությունը

# Դեպքի վերլուծություն (քեյս)

Ա-ն իր հիպերակտիվ վարքով դպրոցի տարբերվող երեխաներից էր:Նա չէր կատարում իր մայրիկի պահանջները՝ դաս անել, համակարգչով չխաղալ և այլն:Ավելին ՝ նրա հետ զրույցից պարզվեց ,որ նա մայրիկին հակադրվելով բավականություն է ստանում:Մայրը բռնություն էր գործադրում երեխայի նկատմամբ ,զայրանում էր,սակայն ապարդյուն:
Առաջացան վարկածներ՝

- երեխան ունի ուշադրություն գրավելու խնդիր,
- ունի բացասական տրամադրվածություն դպրոցի և ուսման նկատմամբ,
- ունի էներգիայի սուբլիմացման խնդիր,
- մոր հետ ունի չլուծված խնդիր ,ինչը դրդում է հակադրման և նման բազում վարկածներ:

Իրականում Ա-ի հետ զրույցից պարզվեց,որ իր հայրիկն ու մայրիկն ամուսնալուծված էին և ,կապված լինելով հոր հետ,մայրիկին հակադրվելով իր ագրեսիան էր դրսևորում ՝հուսալով մոր և հոր հարաբերությունները վերականգնված տեսնել:Խնդիրը ոչ թե այն էր , որ Ա-ն սովորել չէր ցանկանում ,այլ այստեղ դրսևորվում էր կրտսեր դպրոցական տարիքին բնորոշ հիմնական հոգեկան նորագոյացությունը՝ նեգատիվիզմը,որով երեխան ամեն կերպ փորձում էր հակադրվել ծնողին՝ անկախ պահանջի բնույթից :
Այս պարագայում նեգատիվիզմի դրսևորումը բազմաբնույթ է՝ պայմանավորված է նաև ներքին,կոգնիտիվ դիսոնանսով՝ անհամապատասխանությամբ երեխայի ցանկության և իրականության միջև:
Մայրիկը, բռնություն գործադրելով, ավելի է սրում երեխայի ագրեսիայի և նեգատիվիզմի դրսևորումը ընտանիքի անդամների՝ մասնավորապես իր նկատմամբ:
Այստեղ առկա էր նաև անհամապատասխանություն մոր խոսքի և վարքի միջև:Նա հորդորում էր երեխային դաս անել և համակարգչով չխաղալ,մինչդեռ ինքն էր զբաղված դրանով և երեխային չէր օգնում կատարել դասերը:Այս ամենը կմեկնաբանեմ սոցիալական բիհեյվիորիզմի տեսությամբ ՝ երեխան կրկնում է այն ,ինչ տեսնում է, և եթե մեր խոսքը մեր վարքին չի համապատասխանում, դա էլ ավելի է նպաստում ,որ երեխան չհետևի և հակադրվի մեր խոսքին:

- ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ